



24 SEP 2010

4-22a

655

S-30

904

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

„ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

1912 թ. ՀՈԿՏ.ԻՑ ՄԻՆՁԵԻ 1913 թ. ԴԵԿՏ. 31.



573/15/18

Թ Ի Ֆ Լ Ի Ջ  
Տպարան Ն. Ազանեանի Պոլից. 7  
1914

2192

12 AUG 2013

25.503

### ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Հայոց հրատարակչական «ՆԻԷՐ ՄԱՆ ՈՒԿՆԵՐԻՆ» Ընկերության առաջին ընդհանուր ժողովը կայացաւ 1912 թ. հոկտեմբեր ամսին, որտեղ Վարչութեան անդամ ընտրւեցին տ. տ. Աբրահամեան, Բարխուդարեան, Իգիթեան, Մնացականեան, օր. օր. Ն. և Մ. Սերերբրակեաններ, պ. պ. Լիսիցեան, Ռոստոմեան, Աբազեան. փոխ-անդամներ՝ տ. Տէր-Միրաքեան և պ. Ապրեսեան:

Վարչութեան առաջին նիստում 1912 թ. հոկտեմբերի 28-ին նախագահ ընտրւեց պ. Ստ. Լիսիցեան, փոխ-նախագահ՝ տ. Մ. Բարխուդարեան, գանձապահ՝ օր. Ն. Սերերբրակեան, քարտուղար՝ օր. Մ. Սերերբրակեան:

Վարչութեան նիստերին որոշւեց հրաւիրել նաև փոխանդամներին խորհրդակցական ձայնով:

«Հասկեր» ամսագրի խմբագրական մասնաժողովի համար Վարչութեան կողմից հրաւիրւեցին հետեւեալ անձինք՝ տ. տ. Կ. Լիսիցեան, Ե. Յարութիւնեան, Ս. Զաւարեան-Յակովբեան, օր. օր. Ս. Գալաչեան, Շ. Տէր-Նիկողոսեան, պ. պ. Ստ. Լիսիցեան, Ն. Սարգսեան, Յովհ. Թումանեան, Յ. Աղաբաբ, Քափանակեան, Դ. Դեմիրճեան, Ա. Թ. Խնկոյեան, Սիմակ, Մ. Աւետիսեան: Ամսագրի պատասխանատու խմբագիր ընտրւեց Ստ. Լիսիցեան:

Համաձայն Ընդհանուր ժողովի որոշման, Ընկերութիւնը իր վրա էր առել «Հասկերի» 1912 թւի ելու մուտքը: Նախկին հրատարակչի զեկուցումից երևաց, որ 1912 թւին «Հասկերը ունեցել է 600 բաժանորդ, որոնցից ստացւել է 1680 ռ. 25 կ., ապառիկ մնացել է—609 ռ. իսկ ծախսը եղել է 1707 ռ. 90 կ., մինչև 1913 թւի յունւարը դարձեալ պահանջուում է մօտ 759 ռ. ուրեմն ընդամենը 2467 ռ.: Այսպիսով 1912 թ. վերջը դիֆիցիտ էր սպասուում մօտ 200 ռ.:

Նախկին «Նէր մանուկներին» մասնաւոր խմբի ամբողջ գոյքը, ինչպէս յայտարարւել էր այդ խմբի անդամների կողմից Ընդհանուր ժողովի մէջ, անցնում է Ընկերութեանը: Ներկայացրած հաշիւից երևաց, որ խումբը ունի 215 ռ. 95 կ. կանխիկ գրամ, 71 ռ. ապառիկ, 4169 ըուբլու գրքեր և 55 հատ կլիշէներ: Վարչութիւնը այս գոյքը ընդունեց:

Յաջորդ ժողովում որոշւեց պ. պ. Յովհ. Թումանեանի և Ա. Թ. Խնկոյեանին մշտական աշխատակից հրաւիրել, պարտաւորեցնելով նրանց «Հասկերի» ամեն մի №-ին մօտաւորապէս 5-ական երես նիւթ տալու, տարեկան առնւազը 60 երես:



40754-63

Երկրորդ Ընդհանուր ժողովը կայացաւ 1912 թ. դեկտեմբերի 12-ին: Զբաղման առարկաներն էին՝ ա. 1913 թ. նախահաշի քննութիւնը, բ. դեկտեմբերի 12-ին ընկերութեան գոյքի մասին, գ. ընտրութիւն վարչութեան երկու փոխ-անդամի և դ. ընտրութիւն նոր անդամների:

Փոխ անդամ ընտրուեցին տ. Կուզանեան, տ. Բաշինջաղեան:

Տ. Բարխուդարեանի հիւանդութեան պատճառով 1913 թ. փետր. 27-ին փոխ-նախագահ ընտրուեց տ. Սօֆ. Աբրահամեան, իսկ փոխ-անդամներից պ. Ապրեսեանը հրաւիրուեց վարչութեան անդամ:

Երրորդ Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 1913 թ. յունիսի 2-ին Հաւլաբարի ահումբի այգում, նախագահութեամբ Ա. Երզնկեանի և քարտուղարութեամբ Յակ. Ալիխանեանի: Այս ժողովում որոշուեց, համաձայն վարչութեան առաջարկի, պարտաւորեցնել ընկ. անդամներին տարածել «Հասկեր» ամսագիրը և Ընկերութեան ուրիշ հրատարակութիւնները իրենց ծանօթների մէջ. քննել 1912 թ. հաշիւները 1913 թ. հաշիւների հետ միաժամանակ. աշխատել նոր և նոր գրական ուժեր առաջ բերել և խմբել ամսագրի շուրջը: Նոյնպէս մանրամասնօրէն խօսուեց «Հասկերի» 1912—13 թւերի լոյս տեսած համարների բովանդակութեան մասին:

1912 թ. հոկտեմբերի 28-ից մինչև նոր ընտրութիւնները, 1913 թ. նոյեմբերի 16-ը, վարչութիւնը ունեցել է 33 նիստ և չորս անգամ խառը ժողովներ:

վարչութեան անդամները այդ նիստերին ներկայ են եղել՝

	վարչ. ժող.	Խառը ժող.
տ. Ս. Աբրահամեան	17	3
տ. Ս. Բարխուդարեան	15	—
տ. Վ. Իգիթեան	15	2
տ. Մ. Մնացականեան	22	2
օր. Ն. Սերերակեան	18	3
օր. Մ. Սերերակեան	33	4
պ. Ստ. Լիսիցեան	33	4
պ. Վ. Ռոստոմեան	19	4
պ. Յ. Աբաղեան	22	2
պ. Յ. Ապրեսեան	6	2

1913 թ. նոյեմբերի 16-ին Ընկերութիւնը ունեցաւ չորրորդ Ընդհանուր ժողով, որտեղ վարչութեան անդամների նոր ընտրութիւն տեղի ունեցաւ: վարչութեան նոր անդամներ ընտրուեցին տ. Կուզանեան և օր. Մեծբայան, իսկ տ. Աբրահամեանը վերընտրուեց. փոխ-անդամ ընտրուեցին տ. Զարգեղեան, օր. Մ. Ալիխանեան, տ. Տէր-Միրաքեանն ու պ. Ապրեսեանը:

Նոր վարչութիւնը իր առաջին հերթական ժողովում, նոյեմբերի 29-ին. զբաղուեց վարչական և խմբագրական մարմիններ ընտրելով: վարչութեան նախագահ նորից ընտրուեց պ. Լիսիցեան, փոխ-նախագահ՝ տ. Աբրահամեան, գանձապահ՝ օր. Ն. Սերերակեան և քարտուղար՝ օր. Մ. Սերերակեան:

Խմբագրական Մասնաժողովի համար հրաւիրուեցին՝ հին կազմը, բացի

պ. Մ. Աւետիսեանից, որը բացակայ է Թիֆլիսից, նաև նոր անդամներ՝ օր. Կ. Լիանոզեան, պ. պ. Ստ. Տէր-Աւետիքեան և Յակ. Ապրեսեան:

Նոր կազմով 1913 թ. նոյեմբերի 16-ից մինչև տարւայ վերջը վարչութիւնը ունեցել է հինգ հերթական նիստ, որին մասնակցել են բոլոր անդամները:

վարչութեան ժողովները գլխաւորապէս նւիրւած են եղել «Հասկերի» բաժանորդագրութեան կազմակերպութեան գործին. դրա համար վարչութիւնը աշխատել է ամսագրի համարները ճօն և կանոնաւոր լոյս ընծայել, թէ Թիֆլիսի և թէ ուրիշ վայրերի բաժանորդներին համարները ժամանակին և անթերի հասցնել և աւելացնել զաւուսական գործակալների թիւը:

Ընկերութեան միջոցները շատացնելու համար վարչութիւնը 1913 թ. նոյեմբ. 16-ին մի ներկայացում կազմակերպեց Թիֆլիսի ժողովարանում, որի զուտ արդիւնքից 1913 թւին ստացաւ 224 ո. 40 կ., մնացածը ստացաւ 1914 թւին:

վարչութիւնը հրաժարուեց մայիսին մանկական զբօսանք կազմակերպելուց, գտնելով հակամանկավարժական այն զբարձուցիչները, որ սովորաբար առաջարկուում են մեր մանուկներին այդպիսի զբօսանքների ժամանակ: Խառը ժողովները գլխաւորապէս զբաղուել են «Հասկեր» ամսագրի և նրա յաւելւածների քննադատութեամբ և մանկական ցերեկոյթներ կազմակերպելու մասին խորհրդակցութեամբ:

Անցեալ 1913 թ. տարւայ ընթացքում Ընկերութեանը չը յաջողուեց մանկական ցերեկոյթներ կազմակերպել: Առաջին ցերեկոյթը տեղի ունեցաւ ներկայ 1914 թ. մարտի 23-ին ժողովարանի դահլիճում, իսկ երկրորդը՝ վրաց Ազնւականութեան թատրոնում մայիսի 11-ին:

Մանկական ցերեկոյթներ կազմակերպող մասնախմբի անդամ են ընտրուած վարչութեան կողմից տ. Ս. Աբրահամեան, օր. Մեծբայեան և օր. Մ. Սերերակեան. իսկ Խմբագրական Մասնաժողովից տ. տ. Ե. Յարութիւնեան, Ս. Յակովբեան-Չաւարեան, օր. Ս. Գալաչեան և օր. Կ. Լիանոզեան:

Գրասենեակի գործերին հետևելը յանձնուած էր Ս. Աբրահամեանին և օր. Ն. Սերերակեանին, հաշվաւորներին հսկողութիւնը պ. Աբաղեանին, իսկ գրքերի և առհասարակ ինքնատարի մատեանների պահելը տ. Կուզանեանին և տ. Մնացականեանին:

վարչութիւնս մասնակցել է հետևեալ յոբելեաններին՝

1. Պ. Յ. Յովհաննիսեանի գրական գործունէութեան 30-ամեայ յորեկեանին:
2. Պ. Շամշինեանի մանկավարժական գործունէութեան 25-ամեայ յորեկեանին.
3. Գրքերի գիւտի 1500-ամեայ և հայոց տպագրութեան 400-ամեայ յորեկեաններին.

Ընկերութիւնս ունի 5 մշտական և 74 իսկական անդամ:

Նախագահ՝ Ստ. Լիսիցեան

Անդամ-քարտուղար՝ Մարիամ Սերերակեան

# Հ Ա Ս Կ Ե Ր

Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Ա Մ Ս Ա Գ Ր Ի Ի

## Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

գլխումը գաւառական գաւառակայաններին 1913 թի բաժանորդագրութիւնը բանալիս

«ՀԱՍԿԵՐ» ամսագիրը իր սկզբնաւորութեան օրից մենք նկատել ենք ոչ թէ որպէս մասնաւոր, այլ որպէս հասարակական ձեռնարկութիւն: Մենք միշտ այն վստահութիւնն ենք ունեցել, որ մեզ կաջակցեն այն գրական գործիչները, մանկավարժներն և գիտակից ծնողները, որոնք մեզ պէս զգում են մեր ամբողջ հասարակական կեանքի վերակազմութեան անհրաժեշտութիւնն և մեզ պէս հաւատացած են որ լաւագոյն ապագայ ստեղծելու համար պէտք է կրթել մի նոր սերունդ՝ շրջակայ երևոյթները անկասկալ հայեացքով դիտող, ինքնուրոյն մտածողութեան ընդունակ, եռանդուն և աշխուժ: Մենք երբէք չենք կասկածել որ այդ անհատները կը խմբեն «ՀԱՍԿԵՐ»-ի շուրջը և մեզ հետ յանձն կառնեն օժանդակել հայ ընտանիքին և դպրոցին՝ այդպիսի նոր սերունդ պատրաստելու, տալով մանուկներին կըրթիչ ընթացանութեան նիւթ:

Այժմ մեր յոյսերը իրականանում են: «ՀԱՍԿԵՐ»-ի խմբագրութեան անմիջական աշխատակիցներն ու համակրողները, միանալով «ՆԻՔՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» մասնաւոր հրատարակչական խումբի անդամների հետ՝ կազմել են հրատարակական հրատարակչական

### «ՆԻՔՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

որը իր առաջին նպատակն է գրել ապահովել «ՀԱՍԿԵՐ»-ի գոյութիւնը և ճոխացնել նրա թէ արտաքինը և թէ բովանդակութիւնը: Այսուհետև «ՀԱՍԿԵՐԸ» դառնում է այդ հասարակական մարմնի սեփականութիւն: Հրատարակում ենք մեր գաւառական բարեկամներին, որոնք տարիների ընթացքում նպաստել են մեզ «ՀԱՍԿԵՐԻ» բովանդակութիւնը հարստացնելու և ամսագիրը տարածելու, անգամագրել «ՆԻՔՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» նորակազմ ընկերութեանը և ստանձնել պարտականութիւնների հետ միասին նաև որոշ իրաւունքներ:

«ՀԱՍԿԵՐԻ» խմբագրական կազմը, մնալով գրեթէ նոյնը, 1913 թւին էլ կը պահպանի ամսագրի հիմնական ուղղութիւնը, որին նա հետևել է իր գոյութեան աւելի քան 60թԸ տարիների ընթացքում: Այսինքն՝

1. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ կը շարունակի շեշտել մարդկային հոգու վեհագոյն գրգիռները, որ մղում են դէպի անձնւիրութիւն ու անձնագոհութիւն, և անընդհատ կընդգծի այն անքակտելի կապերը, որոնք առանձին

անհատներին շողկապում են ամբողջ ընտանիքին, ժամանակակից մարդկութեան և իրար յաջորդող սերունդների հետ:

2. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ կը ձգտի մանուկ ընթերցողներին մօտեցնել իրենց հայրենի շրջապատին, ներշնչելով անմիջական, ատող սէր դէպի հայրենի ընտանիքն և նրա մէջ ապրողները:

3. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ ամեն ճիգ կը թափի հեռու պահելու հայ մատաղ սերունդը ազգային ինքնագոհութիւնից և ազգամոլութիւնից և անկեղծ յարգանք կարթնացնի դէպի բոլոր հարևան ազգերը, մանաւանդ դէպի այն ժողովուրդները, որոնց հետ միևնոյն հայրենիքում բնակեցրել է մեզ ճակատագիրը:

4. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ չի դաւաճանի իր այն սկզբունքին, որ մանուկներին էլ գեղարեստը պիտի տրի նոյն ճշմարտասիրութեամբ, որպէս և մեծերին, առանց կեղծիքի, առանց շինծու խրատականութեան և տախտկալի վարդապետականութեան:

5. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ կաշխատի լրացնել մանուկների՝ դպրոցում ստացած գիտութիւնների պաշարը, լայն տեղ տալով իր էջերում գիտական յօդաւանդներին:

6. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ չի մոռանայ ներշնչել մանուկ սերունդին վստահութիւն դէպի իր ուժերը և ինքնագործունէութեան ոգի արծարծել նրա մէջ:

7. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ չի դադարի աշխուժ և դարձ տրամադրութիւն պահպանել փոքրիկ ընթերցողների մէջ, նախապատրաստելով կեանքի անաշոյղութիւններից չընկճող բնաւորութիւններ:

8. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ կը ջանայ արժէքաւոր նիւթեր տալով մանկական ցերեկոյթների, երեկոյթների և ներկայացումների համար:

9. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ իր լիզուն կը հիմնի կենդանի գաւառաբարբառների վրա, խոյս տալով գուեհկարանութիւններից, և գիտակցօրէն կոխ կը մղի այն ուղղութեան դէմ, որ մեր նոր գրական լիզուն հեռացնում է ժողովրդից, իր հարստութիւնը փոխ առնելով գլխաւորապէս զբարբառից: Այդ պատճառով՝

10. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ կը նպաստի ժողովրդական բանահիւսութեան և լիզուի մշակութեանը:

11. «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ ամեն տեղ կը որոնի նոր գրական ուժեր, կաշխատի խրախուսել ամեն մի տղանդաւոր սկսնակի և այդպիսով նպաստել հայկական ինքնուրոյն մանկական գրականութեան զարգացման:

12. Վերջապէս «ՀԱՍԿԵՐԸ» այսուհետև էլ կը շարունակի ընտանեկան դաստիարակութեան հարցերին վերաբերեալ յաւելւածներով պարզաբանել ժամանակակից մանկավարժական սկզբունքները այն ծնողներին, որոնք՝ հին գաստիարակչական իդէալներից ազատելով՝ նոր հիմունքներ են պըտրում իրենց գաւառներին ապագայ սերնդի գործունեայ անդամ կրթելու համար:

## Ն Ա Խ Ա

1913 թ. ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

### ՄՈՒՏՔ

	Բ.	Ր.
Անդամավճար . . . . .	140	
Մշտական անդամներից . . . . .	100	
Գրավաճառներից . . . . .	200	
Բաժանորդագրութիւն 4x850 . . . . .	3400	3840
Մասնաւոր եկամուտներ . . . . .	744	744

Ընդ. 4584

## Հ Ա Շ Ի Ի

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ «ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»

Ա. «Հասկեր» ամսագրի հրատարակութեան  
1200 օրինակ, սարեկան 12 №№ x 32 երես.

### ԵԼՔ

		Ր.	Ր.
Վէլկ Ձ-ի			
Թուղթ . . . . .	24 ը. —		
Տպագրութիւն . . . . .	26 ը. —		
Շապկի թուղթ . . . . .	5 ը. —		
Շապկի տպագրութիւն . . . . .	4 ը. —		
Բրոշիւրովկա . . . . .	5 ը. —		
Բանդերոլի թուղթ . . . . .	1 ը. 50 կ.		
Բանդերոլիլը . . . . .	1 ը. 50 կ.		
	Ընդ. 67 ը. 00 +12=	804	804
Փոստ . . . . .		500	
Գրասենեակ . . . . .		150	
Գրասենեկապետ . . . . .		500	
Սրբագրող (յաւելածներով) . . . . .		120	
Ծառայ . . . . .		60	
Մանր ծախս . . . . .		150	1280
Կլիշէներ . . . . .		360	360
Յաւելածներ . . . . .	66 ը. 67 կ. +12=	800	800
Վարձատրութիւն			
Մշտական աշխատակիցներին . . . . .		660	
Մնացած աշխատակիցներին . . . . .		480	1140
Բ. Մանկական զբերի հրատարակութեան . . . . .		200	200

Ընդ. 4584

**Հ Ա**  
1912—1913 թ.թ.

**№ 1. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՒԻԸ**  
(«Հասկերի» հրատարակության հետ միասին)

ՄՈՒՏՎ	Բ.		ԵԼՎ	Բ.		
	Բ.	Կ.		Բ.	Կ.	
Բաժանորդագրություններից . . . . .	3501	40	«Հասկերի» հրատ. վրա ծախսած է . . . . .	4482	74	
Անդամավճարներից . . . . .	232	—		Ցուցանակ և կնիքներ	12	—
Մշտական անդամներից . . . . .	250	—			Մանր ծախք . . . . .	6
Նւէրներ . . . . .	315	95		Մնացորդ առ 1 յուն. 1614 թ.		134
Գրքերի վաճառքից . . . . .	111	70			—	—
Ներկայացումից . . . . .	224	40		—	—	—
	4635	45			4635	45

**№ 2. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՀԱՇՒԻԸ**

ՄՈՒՏՎ	Բ.		ԵԼՎ	Բ.		
	Բ.	Կ.		Բ.	Կ.	
Անդամավճարներից . . . . .	232	—	Խմբագրության տրւած է . . . . .	981	34	
Մշտական անդամներից . . . . .	250	—		Ցուցանակի և կնիքների . . . . .	12	—
Նւէրներ	—	—			Մանր ծախք . . . . .	6
ա. Քաղաք վարկ ընկ.-ից	50	—		Մնացորդ առ 1 յուն. 1914 թ.		134
բ. Տիկ. Փ. Չարդեղիանից (ի յիշատակ հանգուց. ամուսնու) . . . . .	50	—			—	—
«ՆւէրՄանուկներին» խմբից	215	95		—	—	—
Գրքերի վաճառքից . . . . .	111	70		—	—	—
Ներկայացումից . . . . .	224	40	—	—	—	
	1134	05		1134	05	

**Շ Ի Ի**  
ԿՈՐԾՈՆՆԷՆՈՒԹԵԱՆ

**№ 3. ՀԱՍԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՇՒԻԸ**

ՄՈՒՏՎ	Բ.		ԵԼՎ	Բ.		
	Բ.	Կ.		Բ.	Կ.	
Բաժանորդագրին 1912 թ.ի . . . . .	216	07	Տպագրութեան . . . . .	1090	06	
» 1913 թ.ի . . . . .	3109	53		Թղթի . . . . .	627	06
» 1914 թ.ի . . . . .	—	—			Մշտական աշխատակիցներ.	532
(ստացւած 1913 թ.ին.)	175	80		Հոնորար մնացած աշխատակիցներին . . . . .		321
Ընկերութեանից ստացւել է	981	34			—	—
				Գործավարին . . . . .	457	50
					Փոստի . . . . .	391
			Կլիշէներ . . . . .			327
					Մանր ծախք . . . . .	123
			Սենեակի վարձ . . . . .			166
					Նկարներ . . . . .	115
			Ծառային . . . . .			74
					Ցրիչին . . . . .	65
			Թուղթի յայտարարութ. . . . .			63
					Բաժանորդագրին զանազան թերթերի . . . . .	31
			Շարժական գոյք . . . . .			35
					Փոխարինարար տրւած է . . . . .	60
	4482	74		4482		74

Նախագահ՝ Աս. Լիսիցեան

Անդամ գանձապահ՝ Նունե Սեբերակեան

Անդամ հաշուառես՝ Յովս. Աբազեան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1913 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ընկերութեան Ընդհանուր Ժողովը տեղի ունեցաւ ներկայ թւի նոյեմբերի 16-ին, կիրակի առաւօտեան 11 ժամին, Կովկասի Հ. Բ. Ընկերութեան դահլիճում: Ժողովին սկզբում ներկայ էին 20 անդամը, հետզհետէ աւելացան՝ մինչև 27-ի: Ժողովը բացեց Ընկերութեան Վարչութեան նախագահ պ. Ստ. Լիսիցեանը՝ յայտարարելով, որ Ժողովը օրինաւոր է, որովհետև սա ներկորդ ժողովն է և ներկայ են անդամների 1/3 մասը. ուստի առաջարկեց Ընդհանուր Ժողովին՝ ընտրել իրեն համար նախագահ և քարտուղար:

Նախագահ ընտրւեց պ. Ս. Զուրարեանը, քարտուղար՝ պ. Մ. Յարութիւնեանը: Նախագահը կարդաց Ժողովի օրակարգը՝ 1. 1914 թ. «Հասկեր» ամսագրի և այլ հրատարակութիւնների նախահաշւի, նաև գործունէութեան ծրագրի քննութիւնը. 2. Վարչութեան 3 անդամի, 2 փոխ-անդամի և վերաստուգիչ մասնաժողովի բոլոր անդամների ընտրութիւնը:

Նախագահի առաջարկութեամբ Ժողովը նախ զրազւեց նոր անդամների ընտրութեամբ, որպէս զի նրանք ևս մասնակցել կարողանան Ժողովի զբաղմունքներին. ընտրութեան առաջարկեցին հետևեալ նոր անդամները՝ օր. օր. Մեծբայեան, Լիանոզեան, Լէյլի, պ. պ. Միք. Սատաձատրեան և Յովհաննիսեան Պօղոս. կանոնադրութեան § 9-ի համաձայն ընտրութիւնը կայացաւ գաղտնի. ընտրւեցին բոլորեքեանք 20-ական ձայնով, բացի մէկից (Օհանջանեան 19 ձայնով):

Ապա Ժողովն անցաւ օրակարգի հարցերից՝ «Հասկեր» ամսագրի և այլ հրատարակութիւնների ու Ընկերութեան ապագայ գործունէութեան քննութեանը:

Սակայն նախ քան քննութեան անցնելը՝ պ. նախագահի առաջարկութեամբ Վարչութեան նախագահ պ. Ստ. Լիսիցեանը շատ հակիրճ կերպով ծանօթացրեց Ժողովին Վարչութեան մինչև օրս ունեցած գործունէութեան հետ, մանրամասն հաշւետուութիւնը թողնելով մայիս ամսում լինելիք Ընդհանուր Ժողովին, ինչպէս պահանջում է կանոնադրութիւնը:

Պ. Ստ. Լիսիցեանի համառօտ գեղուցումից երևաց, որ Վարչութիւնն ունեցել է 33 նիստ, այն է՝ գրեթէ իւրաքանչիւր շաբաթ. այդ նիստերին,

Վարչութեան որոշմամբ, հրաւիրւել են նաև փոխ-անդամները խորհրդակցական ձայնով, որոնք և հաւասարապէս տարել են գործի ծանրութիւնը: Վարչութիւնը աշխատել է նախահաշւի մէջ նշանակած գումարները հայթայթել, որպէսզի անխափան առաջ տարւի «Հասկեր»-ի և միւս հրատարակութիւնների գործը. այսպէս գտել է նախահաշւից դուրս մշտական անդամներ, աւելացրել է բաժանորդների թիւը՝ 850-ից հասցնելով 900-ի. նախահաշւի կողմնակի եկամուտների վրա ուշադրութիւն դարձնելով Ընկերութեան հրատարակութիւններից 60 կոպէկտ (2 բ. 75 կոպէկի) գրքեր է ուղարկել քաղաքի գործակալներին, որով դարկ է տւել նաև գրքեր տարածելու գործին: Նոյն նպատակով զիմել է զանազան բանկային հաստատութիւններին նպաստ խնդրելով. որ և բաւարարւել է մասամբ (Թիֆլ. Քաղաք. Փոխադ. Վարկի Ընկերութիւնից ստացւել է 50 բ. ստացւել է ևս 50 բ. հանգ. Զարդեղեանի այրուց). մօտիկ ապագայում Վարչութիւնը կազմակերպում է և մի ներկայացում, որով յոյս ունի լրացնել նախահաշւի այդ յօդւածի գումարը:

Ծախսերի մէջ ևս աշխատել է մնալ նախահաշւի սահմաններում, որ և յաջողւել է չնչին փոփոխութիւններով. (աւելացրել է, որոշ հանգամանքներ ի նկատի ունենալով, մշտական աշխատակիցներից մէկի ուճիկը 5 բուբլիով):

Ինչ վերաբերում է խմբագրական մարմնի գործունէութեան այդ՝ հրատարակի վրա լինելով, թողնում է անդամների քննութեան և զնահատութեան:

Ի վերջոյ պ. Լիսիցեանը ի լրումն վերոյիշեալ գործունէութեան առաջարկում է Ժողովին ապագայի համար ի նկատի ունենալ հետևեալ առաջարկները.

1. Վերացնել «Հասկեր»-ի առանց յաւելածի բաժանորդագրութիւնը, ի նկատի ունենալով, որ այդպիսիների թիւը շատ քիչ է (15 հոգի).
2. Յաւելած գրքերի հրատարակութեան կից տալ նաև նախադպրոցական հասակի մանուկների զբաղմունքների համար նիւթեր և սրա համար նախահաշւում մտցնել որոշ գումար.
3. Կազմակերպել մանկական ցերեկոյթ-երեկոյթներ, որպէս Ընկերութեան բուն նպատակին պատշաճ մի ձեռնարկութիւն:

Ժողովը նախքան 1914 թ. նախահաշւի քննութիւնը՝ այս առաջարկութիւնների առթիւ մտքերի փոխանակութիւն ունենալուց յետոյ՝ որոշեց ընդունել այդ առաջարկութիւնները և յանձնարարել Վարչութեան ի գործադրութիւն. յատկապէս ցերեկոյթ-երեկոյթներ կազմակերպելու համար Վարչութիւնը լիազօրւեց իր կողմից հրաւիրել ձեռնհաս մարդկանցից մի մասնաժողով և նրանց աջակցութեամբ առաջ տանել գործը. իսկ Մասնաժողովի անդամներից սրան կամ նրան տալ նաև որոշ վարձատրութիւն:

Այս որոշումից յետոյ Ժողովն անցաւ 1914 թ. նախահաշւի յօդւած առ յօդւած քննութեան, որի բիւջէն է 4868 բ.:— Ժողովն ընդունեց նախահաշիւը և յանձնարարեց ի գործադրութիւն:

Ժողովում առաջարկեց, որ այսուհետև Ընկերութեան գործունէութեան համառօտ տեղեկագիր տպագրել, որպէսզի ամեն ոք հնարաւորութիւն ունենայ իրազեկ լինելու նրան, և այս նպատակի համար նախահաշի մէջ մտցել որոշ գումար. այս առաջարկութիւնն ընդունեց և նախահաշի մանր ծախսերի յօդաւճում աւելացւեց 15 ռուբլի:

Ժողովականներից պ. Միք. Աստուածատրեանը՝ գաւառական գործավարութեան գործունէութեան զարկ տալու նպատակով, առաջարկում է գաւառներում կազմակերպել մասնախմբեր ներկայ գործակալների փոխարէն: Ժողովականներն՝ ոչինչ առարկութիւն չունենալով սրա դէմ, յանձնարարեցին Վարչութեան օգուել այդ առաջարկութիւնից ըստ տեղի և յարմարութեան:

Այսուհետև Ժողովը զբաղւեց ընտրութիւններով. առաջարկութիւն եղաւ ընտրել միայն Վարչութեան անդամներից և փոխ-անդամներից վիճակով հեռացած անդամների փոխարէն նոր անդամներ, իսկ վերաստուգիչ Մասնաժողովի անդամներին թողնել, որովհետև դեռ ևս դրանք ներկայ թւի գործունէութեան և հաշիւների քննութեամբ չեն զբաղւել, քանի որ տարին չի վերջացել և հաշիւները չեն փակւել: Վերջին առաջարկութիւնն ընդունւում է:

Վարչութիւնից վիճակով հեռացել են տիկ. տիկ. Արրահամեան, Իգիթեան և Բարխուդարեան (վերջին երկուսը հրաժարւել են վերընտրւելուց). իսկ փոխ-անդամութիւնից՝ տիկ. Տէր-Միրաքեան և պ. Ապրեսեան:

Առաջարկւում են Վարչութեան համար—տիկ. Արրահամեան,  
տիկ. Կուզանեան,  
օր. Մեծբայեան  
Փոխ-անդամութեան համար—տիկ. Չարդեղեան,  
տիկ. Տէր-Միրաքեան,  
օր. Մ. Ալիխանեան,  
պ. Յ. Ապրեսեան:

Բոլորեքեանք ընտրւում են քւէարկութեամբ և միաձայն:  
Ժողովը փակւեց 2¼ ժամին:

Նախագահ՝ Ս. Զուրաբեան

Քարտուղար՝ Մ. Յաբուիւնեան

«ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր Ը

ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

- 1 պ. Միհրան Անանեան
- 2 օր. Վարսենիկ Էնֆիաճեան
- 3 տիկ. Ղամբարեան Նունէ
- 4 տ. Հայկանուշ Մարտիրոսեան
- 5 տիկ. Մեսիկեան Եղիսաբէթ

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

- 1 պ. Արագեան Յովսէփ
- 2 տ. Արրահամեան Սօֆիա
- 3 պ. Աբովեան Սարգիս
- 4 » Ալիխանեան Յակոբ
- 5 օր. Ալիխանեան Մարիամ
- 6 տ. Ալիբէգեան Նունէ
- 7 » Աղաբարեան Աստղիկ
- 8 պ. Աղաբարեան Յակոբ
- 9 օր. Աղանեան Նւարդ
- 10 պ. Ապրեսեան Յակոբ
- 11 Աստուածատրեան Միքայէլ
- 12 Աւագեան Եղիսաբէթ
- 13 » Աւետեան Սեդրաք
- 14 » Աւետիսեան Մարգար
- 15 տ. Բաշինջաղեան Աշխէն
- 16 » Բարխուդարեան Սաթենիկ
- 17 օր. Գալաչեան Սօֆիա
- 18 պ. Գարդիշեան Գարեգին
- 19 տ. Գիւզալեան
- 20 օր. Գրիգորեան Ն.
- 21 պ. Գուլոյեան Աւետիք
- 22 » Դեմիրջեան Դերենիկ
- 23 » Չարգարեան բժ. Արիստակէս
- 24 Տիր. Չարդեղեան Աննա
- 25 տ. Չաւարեան-Յակոբեան Սօֆիա
- 26 » Չոհրաբեան Սօֆիա
- 27 պ. Չուրաբեան Սարգիս
- 28 տ. Թաղէոսեան Ռողալիա
- 29 » Թումանեան Իշխ. Մարիամ
- 30 պ. Թումանեան Յովհաննէս
- 31 տ. Իգիթեան Վարվառէ
- 32 օր. Լիանոզեան Կատարինէ
- 33 տ. Լիսիցեան Կատարինէ
- 34 պ. Լիսիցեան Ստեփան
- 35 տ. Խատիսեան Աշխէն
- 36 պ. Խզմալեան Թաղէոս
- 37 Խնկոյեան Աթաբէգ
- 38 տ. Ծուրինեան Մարգարիտ
- 39 » Կուզանեան Աննա
- 40 պ. Ղազարեան Գէորգ
- 41 » Մալումեան Մարիամ
- 42 պ. Մանուկեան Ազատ

- 43 տ. Միլեան Վարվառէ  
 44 » Մելիք-Բախտամեան Նունէ  
 45 օր. Մեծբայեան Հեղինէ  
 46 տ. Մինասեան Սրբուհի  
 47 պ. Միրզոյեան Միքայէլ  
 48 տ. Մնացականեան Մարգարիտ  
 49 » Մէլիք-Հայկազեան-Բէգզազեան  
 Հեղինէ  
 50 » Յարութիւնեան Երանուհի  
 51 Յարութիւնեան Մելիտոն  
 52 պ. Յովհաննիսեան Արզար  
 53 տ. Զիլինկարեան Զար.  
 54 պ. Ռոստոմեան Պետրոս  
 55 տ. Ռօտինեան Սօֆիա  
 56 հ. Սահակեան Սահակ քահ.  
 57 օր. Սահակեան — Լէյլի  
 58 տ. Սարգսեան Աննա  
 59 պ. Սարգսեան Նիկողայոս  
 60 օր. Սերերրակեան Մարիամ  
 61 » Սերերրակեան Նունէ  
 62 տ. Սողալեան-Պաուլատա Նունէ  
 63 պ. Ստեփանեան Յովակիմ  
 64 » Տէր Միրաքեան Յովհաննէս  
 65 տ. Տէր Միրաքեան Շուշանիկ  
 66 օր. Տէր Մովսիսեան Եղիսարէթ  
 67 » Տէր Նիկողոսեան Շուշանիկ  
 68 պ. Տէր Սահակեան Սենեքերիմ  
 (Սիմակ)  
 69 » Տօնեան Արամ  
 70 » Քափանակեան Ստեփան  
 71 տ. Քիւրքչեան  
 72 պ. Օհանեան բժ. Բրիստափոր  
 73 Յովհաննիսեան Պօղոս

## ԱՇԽԱՏԱԿԻՑ ԱՆԴԱՄՆԵՐ.

Ալէքսանդրապոլ	Արաբաջեան Յարութիւն
»	Թաբաղեան Սաղաթել
»	Միքայէլեան Գէորգ
»	Տաթևեան Գէորգ
Ախալցխա	Տէր-Յակոբեան
»	Աստածատրեան Միքայէլ
Ախալքալար	Տէր-Գրիգորեան Զալալ
Ախթալա Ն.	Բաբայեան Խաչատուր
Աբուլխ-Վերին	Տէր-Յակոբեան Յակոբ
Անդիժան	Նարինեան Յ.
Աշտարակ	Թամազեան
»	Գասպարեան Հայրապետ
Ասիսաբաղ	Մարտիրոսեան Բախչի
Ատրախան	Ասլանեան Սարգիս Քահ.
Ատա-Բազար	Ստեփանեան Ստեփան
Արղանան	Նազանեան
Արուին	Մարգարեան
Բազու	Առաքելեան Արամ
»	Բժ. Մանդինեան Միքայել
Բենյան	Գէորգեան Յարութիւն
Բաթում	Զաքարեան Յ.
»	Ասատուրեան Մարգարիտ
Բորժում	Քոսեան Յովհաննէս
»	Վարդանեան Վարդան Քահ.
Բուխարեստ	Փափազեան Վրթանէս
Գանձակ	Մանուկեան
»	Երիցեան
»	Գորգեան Գրիգոր Քահ.
Գիրիսի	Մեսեան Զաքար
»	Փարւանեան
Դերբենտ	Ղազարեան Կոստանդին
Դելիջան	Մելքումեան Յարութիւն

Ելնեննորֆ  
Երեսան

Պետրոսեան Քան.

Աւետիսեան Մարգար

„

Ռուշանեան

„

Թադէոսեան Նիկողայոս

„

Աղամեան Աղամ

„

Սիւքեասեան Պետրոս

„

Մելիքեան Սեդրակ

Ջաքաթալա

Ստամբուլցեան Արտաշէս

Թագա-Գիւղ

Վարդանեան Աստածատուր

Թաւրիզ

Տոսկանեան

„

Վարդանեան Մելիք

Թեխաւ

Տէր-Սարգսեան Գէորգ

Թէ՛հրան

Թովմասեան Յովհաննէս

Կոկանդ

Աբրահամեան Ներսէս Քան.

Կուրդուկլի

Խարմանդարեան

Ղազին

Ղազարեան

Ղամարլու

Տէր-Յարութիւնեան Յովհաննէս

„

Իսկեանդարեան Արշակ

„

Նարինեան

„

Տէր-Գէորգեան Միք.

Ղրիմ Շ.

Գալստեան Աղէքսանդր

Ղարս

Տէր-Խաչատրեան Համազասպ

„

Նոհրատեան

Մալկուլ

Կանայեան Վ.

Մեծ-Ղարաբլիսա

Մուրադխանեան Նատալիա

Շուշի

Ստեփանեան Յովակիմ

Ռոստով դ՛վ.

Խշտոյեան

Սալմաստ

Գուրոյեան Աւետիք (Սէյրի)

Սամարղանդ

Տէր-Յակոբեան Բաղամ

Սուխում

Դարբինեան Մնացական

„

Տէր-Ղազարեան Ե.

Սուրամ

Դաւթեան Յովհաննէս

Վաղարշապատ

Թադէոսեան Թադէոս

Վարդաշէն

Իսրայէլեան Ս.

Վլադիկաւկազ

Սուսիկեան Յակոբ Քան.

„

Դուրգարեան Մ.

Տաշկենդ

Մելիք-Ղարախոզեան Գերասիմ

Բուլմայիս

Հայրապետիան Հայրապետ

Օրդուբադ-Մեղրի

Նիկողոսեան

„

Վրացեան Վարվառէ

## Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Վ Ե Ր Ա Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Յ Ա Ն Զ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

Վերաստուգիչ Յանձնաժողովը՝ քննելով Հայոց Հրատարակչական, «Նեւր Մանսկներին» Ընկերութեան 1912 թ. հոկտ.—1913 թ. դեկտ. հաշիւները գտաւ այդ հաշիւները բոլորովին համապատասխանող՝ ել և մտից մատեանների բոլոր կէտերին և ծախսերը փաստաթղթերով վաւերացրած:

Յանձնաժողովը պարտք է համարում սակայն նկատել հետևեալը.

1. 1912 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների բոլոր փաստաթղթերը չը կային, իսկ 1913 թ.ի հաշիւները, որ աւելի կարգաւորւած են, դարձեալ ունեն այդ տեսակէտով թերութիւններ: Ապագայում անհրաժեշտ է պահանջել պատասխանատու անձնաւորութիւններից ել և մտից բոլոր յօդւածների համար փաստաթղթեր՝ վերաստուգիչ Յանձնաժողովին հարկ եղած դէպքում ներկայացնելու համար:

2. Բացի «Հասկերի» ել և մտից մատեաններից և անդորրագրերից հարկաւոր է ունենալ առանձին մատեաններ և անդորրագիր (Վարչութեան նախագահի և զանձապահի ստորագրութեամբ) կողմնակի եկամուտների համար:

3. Հարկաւոր է ամեն միջոց գործ դնել «Հասկերի» ապուրիկները ժողովելու և մինչև որոշ ժամանակ չը վճարողներին ամսագրի առաքումը դադարեցնել:

Վերաստուգիչ Յանձնաժողովի անդամներ  
Նուրե Մելիք-Բախսաւեան  
Մարիամ Ալիխանեան



27997

1914

UNIVERSITY OF CALIFORNIA  
LIBRARY

Faint, mostly illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. Some words like "UNIVERSITY" and "LIBRARY" are faintly visible.



1-11  
1-11

«Ազգային գրադարան»  
  
NL0305141

23,903

4-22a